Թիւրքաց իշխանութեան տակ, քանի որ նրանց մօտ, Ռուսաստանից նորերումն նուաճուած երկիրների մէջ և ամբողջ Կովկասում նրանց եղբայրները կատարելապէս խաղաղ կեանք են վայելում։ Հեղինակը նկատում է, որ Ռուսաստանը ոչ թէ ընդդէմ է Հայաստանի ինքնավարութեանը, այլ ընդհակառակը նպաստում է նրան։ Այդ է Ռուսաստանի աւանդական քաղաքականութիւնը Արևելքի մէջ և նրա ուժի գաղտնիքը դրա մէջն է ծածկված։ Ռուսաստանը միշտ հովանաւորել է Թիւրքիաբնակ քրիստոնեաների ձգտումներին—պաշտպանել է նրանց ազատութեան համար։ Ինչ փոյթ արևելեան քրիստոնեաներին, եթէ այդ քաղաքականութեան քօղով այլ ձգտումներ են ծածկված, քանի որ նրանք ազատութիւն, ապահովութիւն են ցանկանում։ Եթէ Եւրոպան կամենում է սահման դնել ռուսական նուաճումներին Փոքր-Ասիայի մէջ, նա պէտք է ի նկատի առնէ հայերի օրինաւոր պահանջները և ստիպէ Թիւրքիային վերանորոգութիւններ մտցնել Հայաստանի մէջ։ Այսպիսով տարաբաղդ ժողովրդի չարչարանքներին էլ վերջ կը դնվի։

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Օտար պետութիւնների ներկայացուցիչները յանձնեցին Բ. Դրանը իրանց կառավարութիւնների հետևեալ գրութիւնը։

Գերմանիայի, Աւստրո-Ունգարիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի և Ռուսաստանի կառավարութիւնները քննեցին Բ. Դրան պատասխանը յուլիսի 27-ից, որ տուած էր յուլիսի 15-ի իրանց գրութեանը։ Այս վերջինը հաղորդում էր Բերլինի կոնֆերենցիայի վճիռները՝ սահմանները ուղղելու մասին։ Բ. Դուռը, իր պատասխանները տալով կոնֆերենցիայի վճիռներին, խնդրում է միջնորդ պետութիւններից հրամայել իրանց ներկայացուցիչներին Կ. Պօլսի մէջ, որ նրանք բանակցութիւններ սկսեն Բ. Դրան հետ սահմանական վերջնական գիծը որոշելու և մի քանի երկրորդական հարցեր վճռելու համար։ Ի նկատի ունենալով, որ Բերլինի կոնֆերենցիայի վճիռները ընդունուած են մանրամասն քննութեանից յետոյ և թէ յունական, թէ Թիւրքաց կառավարութիւններին առաջարկված էր ընդունել սահմանական նոր գիծը, պետութիւնները չեն կարող համաձայնել, որ այդ առարկան նորից քննվի։ Քանի որ պետութիւնները հաւանութիւն են տուել Բերլինի կոնֆերենցիայի վճիռներին, նրանք պէտք է պնդեն, որ այդ վճիռները իրագործվեն և առաջարկեն նրանց Բ. Դրանը, իբրև Բերլինի դաշնագրի և կոնգրեսի պրօտօկոլի հետ կատարելապէս համաձայն։ Այս պատճառով մեծ պետութիւնների կառավարութիւնները չեն կարող յանձնել իրանց ներկայացուցիչներին, որ նրանք նոր բանակցութիւններ սկսեն սահմանագծի մասին, բայց նրանք ուրախութեամբ կը լսեն Թիւրքաց կառավարութեան իւրաքանչիւր առաջարկութիւնը՝ Յունաստանին միացված երկիրները Թիւրքաց զօրքերից մաքրելու և նրանց յունական կառավարութեանը յանձնելու մասին։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, 17-ին օգոստոսի

Առաջի նամակովս իմացուցած եմ թէ Բ. Դուռը ինչ վատութիւն յանձն կառնէ հայոց գաւառին այլ և այլ գոյներ տալու և ոչնչացնելու. վատութիւնը օրէ օր, ժամէ ժամ աւելի շատցնելով մինչ այժմ հազար և մէկ օրինակով ցոյց տուաւ, որ ամեն ջանք կընէ հայերը անհետացնելու համար: Իսկ Եւրոպա ալ ի բնէ ճանաչելով Դռան ինչ ստախօս լինելը, բնաւ մեծ ճիգ մը չըրաւ հայը պաշտպանելու համար և մինչև այսօր ծանուցագրին չը պատասխանեց. այսու հանդերձ հարկաւ աւելի ազդու ճամբայ պիտի բռնէ կերևնայ, վասն զի Հայաստանի անգղիական ընդհ. հիւպատոս պ. Թրօթթըր 5 օրէ ի վեր հոս է. անշուշտ բերանացի տեղեկութիւններ պիտի տայ, աւելորդ է ըսել, որ ի՞նպաստ հայոց պիտի ըլլան, վասն զի բոլոր աշխարհ կը տեսնէ Հայաստանի մէջ անցածները, իսկ միայն Թուրքն է որ ծիծաղելի քաղաքականութեամբ և միամիտ խելքով կը տքնի անդադար քօղարկել այն, որ սակայն շատոնց պատռված է: Վերջապէս որչափ ալ ինչ գրեմ չը լրանար, Թուրք լրագիրք ալ ըստ իւրեանց համոզման մեծ դեր կը խաղան, երևակայական Քիւրդստան և քիւրդ պէյեր ստեղծելով և ինչ Պէյեր գիտէք….մեծ ազգեցութեան տէր….որք եթէ քիչ մըն ալ տեսնեն Եւրոպիոյ բարենորոգմանց վրայ պնդելը, կը սպառնան Եւրոպան քար ու քանդ անել…. առաջին մրցանակը այս մասին կրնայ տրուիլ «Թէրճէմանը Հաքիքաթի» որն Սուլթանին բերանն է. պակաս չէ նաև «Օսմանլը» անուն գաղղիերէն և թուրքերէն թերթը, որ կը ճգնի ինքն ալ հասնել նորա մրցանակին. բայց տխրութեամբ կը տեսնայ, որ եւրոպացոց առջև բոլորովին յարգը կորսնցաւ և այն ալ 8-րորդ թիւէն…. Դժբաղդ Թուրքը այս թերթով իւր բռնած ծիծաղելի ճամբան պիտի քօղարկէր….

Իսկ հայերը ինչ կընեն. թերևս խիստ քիչ բան պիտոյից հետ հաշւելով. սակայն Հայաստան և հայն ալ արթնցած են և կը սպասեն դրդռումի մը, բայց մի կարծէք թէ աչա եղած է. ոչ, դեռ առաջին քայլն է որ կանենք: Սովը չը գնաց, չը հեռացաւ և տարափոխիկ հիւանդութիւններ խիստ շատ են, մատաղները պակաս չեն, ուրեմն ազգասէր բժիշկներ, վայրկեան է որ հրապարակ նետուին. թող գիտնան, այո, որ իրենց յիշատակը պատուով պիտի դրոշմուի ի շարս Վարդաններու, Յովհաններու: Ս. Պատրիարքն է որ թէ գաղտնի և թէ յայտնի կը գործէ, այո, գիշեր ու ցորեկ, իսկ ազգային լրագիրք ըստ կարի կը գրեն երբեմն: Իսկ դուք, ո՛ խմբագիր, գրեցէք, գրեցէք և լեցուցէք թերթերնիդ, յոյս մեծ ունիմք, որ մինչ այժմ գաղղիերէն լրագիր հրատարակելու մասին ըրած առաջարկութիւննիդ ընդունուած է և առաջին թերթերը ելնել սկսած են, բայց գոնէ շաբաթը երկու անգամ հրատարակեցէք: Բայց ցաւօք սրտի կը տեսնենք, որ ռուսիաբնակ եղբայրք բոլորովին սովելոց նուէրները դադրեցուցած են, մինչդեռ հոս գոնէ կիսաչափ կը շարունակէ: Ոչ այժմ ևս դեռ մեծ վտանգներ կան և կը սպասվին…. Այո, մեծ վտանգ: Թերևս տարակուսիք, բայց լսեցէք. համաչեց Թուրքը մինչ այժմ սովը շարունակել տալու համար ամեն բան ընել, քուրդերը ապստամբութեան և հնձոց կիզման դրդել. խոստացաւ տասանորդը հանել և այսօր ինչ վատութիւն. տիրողը առաջ կը նետուի յափշտակելու համար և այլն….

Ուրեմն, սիրելի եղբայրք, ժամանակ կեցած առնը օգնենք, չէ՞ք, եթէ յառաջիկայ ձմեռուան միայն նէ «կորսուեցաւ Հայաստան». որչափ կուզէք դրամ տուէք, ունի և ունի՛ նա իր օգուտը. չանցնենք ժամը, ոչ ալ վայրկեանը, մէկ անգամ ևս օգնեցէք, մի ուշացնէք վայրկեան մը անգամ կորուստ է: Թուրքը դեռ կաշխատի անհետացնելու և կործնելու զմեզ:

Ազգային «Միացեալ Ընկերութիւնք» կեդրոնը ամրացնելու կաշխատին ապագայն ապահովելու համար և յոյս կայ, որ մօտերս բաղձանքնիս կատարուի, և սկսի գործել: Օն ուրեմն նոքա համաձայն գտնուեցան մեր բաղձանաց, մեք ալ չը դանդաղիմք զնոսա առաւել գրգռելու. փոքր չէ իրենց քուէարկած ծախքը, այն է 45—50000 րուբլ, հարկաւ պէտք է 70000 րուբլ եկամուտ մը ունենալ, որպէս զի կարենայ երթալով տարածիլ. մեծ պէտքերնուս մէկն ալ այս է և ապահով եմք որ ռուսաստանցի եղբարք աւելի լաւ պիտի գնահատեն և պսակեն իրենց բազմարդին նուէրներով:

Քաղաքական կէտը խիստ տաղնապալից է. մութ ամպեր շրջապատած են Թուրքը. քանի օր է որ խիստ դժուարին և շատ գաղտնի գործեր կան, նոյնպէս քանի օր է որ Եւրոպաէն հեռագիր չը կայ, ապահովապէս Դռնէն կը բռնուին, գիշերները պալատը խորհուրդներ պակաս չեն և երէկ օր առաջ գիշերով հեռագիրներ ղրկուեցան Եւրոպա, Ալպանիա և Փոքր-Ասիա. հարկաւ մեծ ճնշումներ կան. ո՞վ գիտէ ինչ պիտի ըլլէ: Սակայն այլ հոնի ճամբայ….ապագան յղի է և տար երկինք որ շատ ծնէր անշուշտ մեզ հայոցս նպաստաւոր կերպով, Թիւրքերը խելագարած են և մօտ են գլորվելու:

Աբէդդին փաշան իր վատ նախորդները կը գերազանցէ ստութեան և վատութեան մէջ, անշուշտ նմա գործք կրնամք համարել Արթին էֆ. Դադեան. դժբաղդ եմք իրաւ որ չունիմք ազգային ոգւով մէկը, որ մինիստրութեան մէջ լինի, ինչպէս յոյնք ունին. այլ շատ են փասալներ…. Արդեօք երէկուայ կառավարիչ և այսօր արտաքին գործոց պաշտօնեայ Աբէդդինը չի ճգնէր Եւրոպացոց ալ ընել ինչ որ հազարներով կրնէ մեզ, որ տկար եմք:

Մեծ ուրախութիւն ազդեց առս կոմս Լօրիս-Մելիքովի ներքին գործոց մինիստր լինելը, մանաւանդ այն բացառիկ գիրքերն և պաշտօնները, զոր կատարեց և կը կատարէ յօգուտ բոլոր ռուս ազգին, մեծ փայլ մը մեզ հայոցս, զոր կը յուսամք թէ չը հաներ իւր արիւնակիցները, իւր եղբայրներն ալ մտքէն և ապահով եմք վայելել իւր մեծ բարերարութիւնները և ազգեցութիւնները. այս բարեմասնութիւնք կը յիշեցնեն մեզ թէ այդ «հայ ազգը կոչուած է մեծ դեր խաղալ Եւրոպիոյ և Ասիոյ մէջ:»

Երկրորդ՝ առաջարկութիւն մ'ալ պ. Րաֆֆիին. մեծ յուզմունք և ցանկութիւն կը ազդէ հոս «Խենթ»-ի շուտ տպուելու մասին, որչափ որ կարելի է: Կը յուսամ որ մեծ. Րաֆֆի չը մերժեր Թրքահայոցս այն փափագը և շուտով մամուլի տակ կը դնէ: Դժբաղդ կը կոչեմ այս մասին ինքզինքս հեռու գտնուելուս համար. կառաջարկեմ մեծ. հրատարակչին որ շուտով սկսի գործը և գինը որոշելով բաժանորդագրութիւն բանայ և անմիջապէս ինձ մի հարիւր հատ ուղարկէ, զոր ուրախութեամբ յանձն կառնում տարածելու: Այստեղ կը գտնուին շատեր. կը պնդեմ միայն անոր համար որ որչափ շուտ տպուի, այնչափ շատ իւր ազգեցութիւնը կունենայ, որն մեծ խրախոյս է: Կաղաչեմ, խմբագիր տէր, որ թարգման կանգնիք ինձ այս մասին մեծ. հրատարակչին և չը գլանաք ձեր կողմէ ալ պնդել զոր կը յուսամ:

Բ.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, 30 օգոստոս 80

Տաճկաստան շատ և շատ խաբեց զԵւրոպա և կը կարծեր թէ այս անգամ ևս ամբողջ ձմեռ մը այդ խաղն կարենայ խաղալ. բայց Եւրոպա հաստատամիտ է իւր որոշումներն գործադրելու մասին: Այս պահուս, յորում այս տողերն կը գրեմ, արևելեան հարցը թերևս այնպիսի կերպարանք մը առած ըլլայ յորմէ կարենամք յուսալ թէ յունական և հայկական հարցերն ալ իրենց լուծումը պիտի կրնան գտնել: Եթէ մի քանի ժամ վերջ Թիւրքերն Տուլցինիօն չը յանձնեն Մոնթէնեկրօյի (և մաղթեմք որ կարող չըլլան յանձնել) նաւային մեծ ցոյցը տեղի կունենայ: Ցուցմունքը կը տիրէ կառավարական շրջանակներու մէջ: Նախարարաց խորհուրդը սուլթանի նախագահութեան ներքև 15 ժամ անդադար ժողովք կընէ: Բ. Դրան բոլոր թախանձանաց և աղաչանաց առաջ տէրութիւնք անխախտելի կը մնան իրենց որոշման մէջ. քրիստոնեայք իրենց յոյսը այդ ցոյցի վրայ կեդրոնացուցած են:

Նաւային ցոյցի հետ միասին Անգլիոյ Թագուհւոյն ճառը, խորհրդարանի փակման առթիւ, օրուան խնդիրն է: Դիւրին է ձեզ ենթադրել հայոց ուրախութիւնը և թրքաց զայրոյթը, երբ եւրոպական կարևորութիւն ունեցող երկու մեծ խնդիրներէն անբաժանելի կը տեսնեն հայկական հարցը: Վագրեթ յիմար յարձակումներ կընէ խորհրդարանական ճառի վրայ, և կը ջանայ ապացուցանել թէ Եւրոպա համամիտ չէ Անգլիոյ բարենորոգմանց մասին: Ըստ Վագրեթի մէկ տէրութեան ուզած բարեկարգութեանց նշանակին երկու տէրութիւնք հակառակ կըլլան. ըստ իրեն առանց ուշադրութիւն ընծայելու Եւրոպիոյ պահանջմանց Թիւրքիա ըստ հաճոյս պէտք է գործէ: Սակայն դեսպանք այսպէս չեն հասկնար. Թիսօ-Կօշէն ծրագիրն ատարուած է. կը կարծուի թէ Լիբանանու փաշական կամակերպութիւնը չիմ բռնած ըլլան իրենց ծրագրին: Courrier d'Orient կը հաղորդէ թէ Ռուսիա այդ ծրագրի ընդունելութեան համար իւր հաճութիւնը ամեն տէրութիւնէ առաջ տուած է արդէն: Ֆրանսայի և Անգլիոյ կողմէ ո՛չ և է դժուարութիւն չը վախցուիր, միւս տէրութիւնք արդէն յարուցանելու պատճառ մը չունին, հետևաբար ոչ շատ ուշ այդ ծրագիրն իբր ամբողջ Եւրոպայի ընդունածը կը ներկայանայ սուլթանի կառավարութեանը: Կը մնայ գործ գործադրութիւնը. պէտք է որ քիչ մ'ալ մեք մեր կողմէ աշխատինք այդ գործադրութիւնը դիւրացնել, ապուշ ապուշ լալով չէ որ փափագներն իրականութիւն կըլլան: Բայց Թիւրքերն ինչ կընեն. իրենց կարծիքը քիւրդ միութիւնը պիտի կարենայ բարեկարգութեանց հարկը խափանել. սակայն Անգլիոյ խորհրդարանին մէջ եղած առարկութիւններն զիրենք կը շփոթեն: Հագիքաթ, քիւրդ միութեան պաշտպանը, կը սկսի հրատարակել թէ առ այժմ այդպիսի միութիւն մը չը կայ. բայց ապագային մէջ կրնայ ծնունդ առնուլ, առ որ Մէսսէնճըր կը պատասխանէ ընդարձակ յօդուածով մը և կըսէ թէ կրօնքն քիւրդ միութիւն մը դաստիարակութիւն տարածելու, վաճառականութիւն զարգացնելու կամ ուրիշ ո և է նպատակաւ մը, բայց անկարելի միութիւն մը ինչ կրնայ ըլլալ, եթէ ոչ քրիստոնէից դէմ սպառնալիք: Stamboul կը յայտնէ թէ արդարև պետական անձ մը (նախկին առաջին պաշտօնեայ Սաիդ փաշան լինելու է) յղացած է այս գաղափարը, բայց այժմ զորս գործադրութիւնը մէկ կողմ ձգուած է: Թիւրքերն կը կարծէին թէ գաղտնի կերպով կը յաջողին այդպիսի միութիւն մը հաստատել և զմեզ անելանելի ճամբու մը մէջ ձգել, սակայն չը յաջողեցան. բայց այսպէսով չը կարծենք թէ հանգիստ նստած ենք. ձեռքերնուն եկած մեքենայութիւններն կընեն: Հագիքաթ, սուլթանի անձնական օրգանն երէկ հետևեալ տողերն կը հրատարակէր. «Եթէ Եւրոպա բռնութեամբ ուզէ բարեկարգութիւններ մտցնել Քիւրդիստանի մէջ (իմա Հայաստան Արևելեան Ռումէլիէն աւելի ցաւալի վիճակ պիտի ունենայ (այսինքն Պուլղարաց կոտորածին միջոցը) և ամբողջ երկիրը մարդկան կոտորածի սպանդանոց մը պիտի դառնայ: Այս նողկալի տողերն ինչ աստիճան զայրոյթ կազդեն աւելորդ է ըսել, ուրեմն հայոց կոտորածը կը պատրաստեն զանոնք պաշտպանելու պարտականութիւն ունեցող կառավարիչներն, և այս տողերն կը հրատարակուին մայրաքաղաքի մէջ, Թիւրքիոյ լուսաւորութեան կեդրոնին մէջ, այս տողերն կը ստորագրէ Եւրոպա կրթուող Թիւրք մը, և դեռ կըսեն թէ Տաճկաստան քաղաքակրթուելու ընդունակ է:

Թիւրք թերթերն ալ դիմակը վար առած կը սկսեն ամբաստանել Օդեան էֆէնդին և Մելքոն խանը (պարսկ. դեսպանը ի Լօնդրա) որ Եւրոպիոյ հասարակաց կարծիքն կը պղտորեն Փարիզի և Լօնդրայի թերթերու միջոցաւ հայոց դատը պաշտպանելով և զԹիւրքիա ամբաստանելով: Թիւրք թերթերն պարսից կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրեն Հայաստանի խնդրոյն վրայ առարկելով թէ Պարսկաստան ալ Հայաստանի մաս մը ունի իւր իշխանութեան ներքև և թէ հայոց Պատրիարքը փոթորիկ մ'ալ իրենց կը պատրաստէ: Թիւրք թերթերու նպատակն է տաճիկ ժողովուրդը հայոց դէմ գրգռել պաշտել զի կը դիտեն թէ մենք Հայաստանի մէջ հայերն և Թուրքերն համաձայն պահելու կաշխատինք, կը տեսնեն թէ հայք և տաճիկք միասին, բողոքագիրներ կը ստորագրեն և կը խրկեն հայոց Պատրիարքարանը, մանաւանդ սովու միջոցին հայոց ըրած բարերարութիւններն Թիւրքերու և քիւրդերու անմարսելի են նոցա: Պատրիարքը ազդու գրով մը Դռնէն պահանջեց որ «Հագիգաթը» իբր խռովարար թերթ պէտք եղած ազդարարութիւններն ընդունի: Բայց ո՛վ պիտի համարձակի առանձ մը դնել բարձրագոյն իշխանութեան օրգանին: Այդ Հագիգաթն էր որ մոլեգին յարձակումներ կընէր յունաց Պատրիարքի դէմ իբր գրգռիչ յունական ապստամբութեան Կ. Պօլսոյ մէջ, իբր մեղսակից հայոց Պատրիարքին և նորա հետ միասին հարստահարութեանց կեղծ տեղեկագիրներ պատրաստող: Նէօլոգոս, յունաց ամենէն կարևոր թերթը կը պատասխանէր թէ անշուշտ Թիւրք մամուլը կը ցաւի որ անցեան այն ժամանակներն յորում տաճիկներն ժողովուրդի առջեւ կը նետէին Պատրիարքներու գլուխները: Անմիջապէս կառավարութիւնը դադրեցուց Նէօլոգոսը երկու ամսոյ համար: Յոյներն մեծաքանակ նուիրատուութիւններ կընեն իրենց յանդուգն թերթը խրախուսելու համար: Օրըստօրէ յունաց և մեր մէջ աւելի ներդաշնակութիւն և բարեկամութիւն կը տիրէ զոր մեր թշնամիք լաւ աչօք չեն դիտեր: Ինչպէս Կ. Պօլսոյ ամբողջ եւրոպական մամուլը, նոյնպէս բոլոր յունաց թերթերն շատ նպաստաւոր են մեզ և համակիր ամեն ժամանակ. չեմք հասկնար ինչու «Մասիս» կուզէ երկու ժողովրդոց մէջ ատելութիւն սերմանել, անպատեհ յօդուածներ գրելով յունաց դէմ: Այժմ մեր եկեղեցւոյ արարողութիւններն կը թարգմանուին յունարէնի, առկէ ոմանք լուր տարածեցին և Stamboul ալ արձագանք եղաւ թէ Արևելեան երկու մեծ եկեղեցիներն միանալու բանակցութիւններ կընեն: Աւելորդ է ըսել թէ այդպիսի գաղափար մը ոչ ոք ունեցեր է. երկու ժողովրդոց շահերն կը պահանջեն սիրով լինել և միութեան խնդիրներով չը զբաղիլ, հետևաբար այս լուրը ինքնին կարևորութիւն մը չառաւ. գուցէ պ. Շաշնուր, որ քիչ շատ երազատես է, սկսի այս միութեան դէմ յարձակիլ, ռուսահայոց դաւ մը նկատէ զայն, և օր մը հօրինած զաղրած հռչակէ թէ ինքն Շաշնուր մեծ վտանգէ մը փրկեց Հայաստանեաց եկեղեցին: Արդէն մտածանք որ պ. Շաշնուրի մի քանի բացատրութիւններ պիտի տայինք մեր տեղական գործարանաց խանգարման մասին. ուրիշ առթիւ մը:

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 8 սեպտեմբերի։ Մինիստրութեան կազմելը յանձնված է Ժիւլ Ֆերրիին։ Կրէգիտը վերաբերվում է միայն ներքին հարցերին։ Ժիւլ Ֆերրի ծովային մինիստրի պաշտօնը Ժօրեգիբերին (?) առաջարկեց, արտաքին գործերի մինիստրի պաշտօնը կը յանձնվի Շալմել Լակուրին, Նախելին (?) կամ Փօրժին։

ՓԱՐԻԶ. 8 սեպտեմբերի։ Ֆերրի, Կոնստան, Կազօ, Տիրար, Ֆարր, Մանիէն և Կօշրի երևի կը մնան մինիստրական պաշտօնների մէջ։

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ

ԻԳԴԻՐ, սեպտեմբերի 9-ին։ Լուր կայ, թէ Վանի հայերի մէջ ապստամբութիւն է ծագել, սպանված հայերի թիւը 70 հոգի են, Թիւրք սպանվածների թիւը դեռ ևս յայտնի չէ։ Երկու կողմերն էլ լաւ զինաւորված են։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ